



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԴՐԱՍՐԱՅԸ՝ MOCAԻ ՄԷՋ

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 19 Օգոստոսի յետմիջօրէին այցելեց Լոս Անճելըսի Արդի Արուեստներու Թանգարանը, ուր տեղի կ'ունենայ աշխարհահռչակ գեղանկարիչ Արշիլ Կորքիի (Ոստանիկ Ատոյեան) գործերու ցուցահանդէսը: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային ցուցահանդէսի կազմակերպիչ յանձնախումբի անդամներէն ու զօրակիցներէն Տեարք Հրայր եւ Վահան Կարպուշեան:

Առաջնորդ Սրբազանը դիմաւորուեցաւ թանգարանի գլխաւոր պատասխանատուներէն Փօլ Շիմըլի եւ թանգարանի բարգաւաճման բաժանմունքի վարիչ Էտըմ Կրոսի կողմէ: Առաջնորդ Սրբազանը իր գնահատանքն ու գոհունակութիւնը արտայայտեց այս ցուցահանդէսին կազմակերպման համար: Ծանօթ է, որ Ցեղասպանութենէն վերապրած Կորքիի գործերուն մէջ արտայայտութիւն գտած են իր ու հայութեան տառապանքները, անկախ այն իրողութենէն, որ հայազգի նկարիչը կը նկատուի ամերիկեան ցամաքամասի վրայ ռահվիրա մը եւ գագաթ մը՝ արուեստի աշխարհին մէջ:

Առաջնորդ Սրբազանը, ցուցադրուած գործերը դիտելէ ետք, հանդիպում ունեցաւ յիշեալ պատասխանատուներուն հետ: Էտըմ Կրոս, որ նաեւ պատասխանատուն է հայ գաղութին հետ կապերուն, յիշեցուց, որ ցուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ 20 Սեպտեմբեր. դիրացնելու եւ քաջալերելու համար արուստասերներու այցը, թանգարանը հաստատած է կտրօններու դրութիւն մը (Coupon), ինչ որ առիթ կու տայ երկու անհատներու՝ մէկ այցեգինով մուտք գործել ցուցահանդէսի սրահը:

Կը քաջալերենք մեր ժողովուրդը, որպէսզի այցելէ ցուցահանդէսը եւ ծանօթանայ մեծ արուեստագետի գործերուն:

## PRELATE VISITS ARSHILE GORKY EXHIBIT AT MOCA

On Thursday, August 19<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Museum of Contemporary Art to view the Arshile Gorky exhibit. He was accompanied by "MOCA Friends of Arshile

Gorky" committee member Mr. Hrair Garboushian and collaborator Mr. Vahan Garboushian.

Upon his arrival at MOCA the Prelate was greeted by Chief Curator Mr. Paul Schimmel and Associate Director of Development Mr. Adam Gross, whom he thanked once again for his initiative in organizing the exhibit which features nearly 200 of the artist's works.

After viewing the exhibit, the Prelate had a meeting with Mr. Adam Gross, Associate Director of Development at MOCA. Mr. Gross noted that MOCA is extending an offer of two admissions for the price of one to the exhibit through September 20. The 2 for 1 admission coupon can be downloaded from the news section of our website, or by clicking the following link [Click Here to Download 2 for 1 Admission Coupon](#). We encourage our parishioners to take advantage of this promotion and visit MOCA to view the works of Arshile Gorky.